

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.Ա.ԲԻՄ.ՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ

ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների ինֆորմացիոնային և նախաձեռնության զարգացման համար դրդապատճառների խթանումը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅԻ՝

Վարդենիս Համազասպ Համբարձումյանի անվան

ավագ դպրոց ՊՈԱԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻԶ՝

Ցենյա Խաչատրյան

ԴՊՐՈՑ՝

Կարենադրյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց

Վարդենիս 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----  
-----3

**Գլխակ ակնարկ 1**

**1.1** Ուսման նկատմամբ դրդապատճառների (մոտիվացիա ) խթանումը սովորողների ինֆորմացիայի և նախաձեռնության զարգացման համար

**1.2** Հասկացություն ուսումնական դրդապատճառների (մոտիվացիայի) մասին -----4

**Գլուխ II**

**2.1** Ուսման նկատմամբ դրդապատճառների (մոտիվացիա ) խթանումը սովորողների ինֆորմացիայի և նախաձեռնության զարգացման համար----- 6

Եզրակացություն

-----  
--15 Դասապլան

1-----

-----16

Դասապլան 2

-----

-----19

Օգտագործված գրականության

ցանկ-----23

## Ներածություն

Դպրոցական կյանքի բովանդակության մեջ առանց խնաստի ու արժեքավորման հիմքի չի կարող գոյություն ունենալ գործունեություն: Հարկավոր է հստակ ձևավորել, զարգացնել և խթանել սովորելու դրդապատճառներ /մոտիվացիա/: Ինչով են պայմանավորված դպրոցականների ուսումնական գործունեության դրդապատճառների խնդրի արդիականությունն ու կարևորությունը: Այսօր կրթությանն ու դաստիարակությանն առնչվող առավելապես սուր խնդիրներն կապված են կամ դպրոցականների վարձագծի բացասական մոտիվացիայի, կամ դրդապատճառների բացակայության /վերջինս հանդիպում է մեծ մասի մոտ/, հետևաբար նաև կրթության ու դաստիարակության հիմնական ցուցանիշների իջեցման հետ: Դրական դրդապատճառները հոգեբանական, բարոյական և ֆիզիկական առողջության պահպանման ու զարգացման ուժեղ գործոններ են: Ուսումնական մոտիվացիայի ձևավորումն առանց չափազանցության կարելի է համարել ժամանակակից դպրոցի կենտրոնական խնդիրներից մեկը, իսկ կրթության դրդապատճառի կազմավորման մակարդակը մանկավարժական գործունեության արդյունավետության կարևոր ցուցանիշներից է: Ուսումնական գործունեության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի առաջացման վրա էական ազդեցություն կարող են գործել դրական հույզերն որոնք առաջանում են սովորողների գործունեության ընթացքում և ձեռք բերած արդյունքից: Ուսումնական գործունեության արդյունքների գնահատման մոտիվացիան դերը կիսակած չի հարուցում: Կարևոր է, որպեսզի սովորողների ուսումնական գործունեության գնահատականի մեջ տրվի սրական, այլ ոչ քանակական տարրալուծում, ընդգծել դրական պահերը, ուսումնական նյութի յուրացման առաջխաղացումը, պարգևատրել թերությունների պատճառները, և ոչ ունենալ միայն դրանց առկայությունը: Գնահատականներն ինքնանպատակ չպետք է լինեն սովորողների համար: Դրանից կարող է տեղի ունենալ ուսումնական մոտիվացիայի տեղաշարժ գործունեության, հանաչողական գործընթացից գնահատական, որը ձեռք է բերվում ազնիվ միջոցներով: Դա հանգեցնում է ուսումնական /հանաչողական/ գործունեության հանգամանքի և սովորողի անձի զարգացման դեֆորմացմանը:

## Գրական ակնարկ

**1.1** Ուսման նկատմամբ դրդապատճառների (մոտիվացիա) խթանումը սովորողների ինֆորմայնոլոգիայի և նախաձեռնության գարգացման համար

**1.2** Հասկացություն ուսումնական մոտիվացիայի մասին

Ուսումնական մոտիվացիան մոտիվացիայի մասնավոր տեսակ է, որը ներառված է ուսումնական գործունեության մեջ և սահմանում է գիտելիքներ ստանալու սովորողի պահանջումները: Այն, թե ինչպիսի մոտիվացիա կձևավորվի սովորողի մոտ, կախված է մի շարք գործոններից.

կրթական համակարգի կառուցվածք (կրթության առկա մակարդակները, մի աստիճանից մյուսին անցնելու հեռանկարները, կոնկրետ մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորությունները),

կոնկրետ կրթական հաստատության (դպրոց, ուսումնարան, բուհ և այլն), մանկավարժական կոլեկտիվի գործունեությունը, հոգեբանական մթնոլորտը,

կրթական գործընթացի կազմակերպումը (պարապմունքների ժամանակացույց, ուսումնական տարվա բաժանում ֆաուրդների կամ կիսամյակների, սովորողների գիտելիքների ընթացիկ և ավարտական ստուգման ձևեր),

սովորողի անձնային առանձնահատկությունները (տարիք, սեռ, ինտելեկտուալ զարգացում, ինֆորմացիոնական, ընդունակություններ, մյուս սովորողների հետ փոխգործունեության առանձնահատկություններ),

սովորեցնողի անձնային առանձնահատկություններ (վերաբերմունք աշակերտի և դասավանդման հանդեպ և այլ),

ուսումնական առարկայի յուրատիպություն (գիտելիքների ոլորտ, սովորողների համար սուբյեկտիվ բարդություն, դասավանդման մեթոդների առանձնահատկություններ):

Ուսումնական մոտիվացիան, ինչպես և ցանկացած այլ մոտիվացիա, համակարգային է: Այն բնորոշվում է ուղղորդվածությամբ, կայունությամբ և շարժունությամբ: Ուսումնական մոտիվացիայի կառուցվածքում կարող են գերակայել կա՛մ ներքին դրդապատճառները՝ պայմանավորված գործունեության բովանդակությամբ և դրա իրականացմամբ, կա՛մ արտաքին դրդապատճառները՝ կապված հասարակական հարաբերություններում որոշակի տեղ զբաղեցնելու պահանջումների հետ (հաջողությամբ ավարտել ուսումը, արժանանալ շքանշանի դրական վերաբերմունքին, ինչ-որ պարգև ստանալ): Տարիքին զուգահեռ տեղի է ունենում սովորողի պահանջումների և դրդապատճառների զարգացում և փոխազդեցություն, ինչը հանգեցնում է դրանց հիերարխիայի փոփոխության:

Ուսումնական մոտիվացիայի կայունության հիմնական հոգեբանական դետերմինանտներն են.

1) մոտիվացիոն կառուցվածքի ելակետային տեսակը (այն, թե սովյալ անձնավորության մոտ ուսումնական գործունեության որ դրդապատճառներն են գերակայում),

2) գործունեության առարկայական բովանդակության անձնային նշանակալիությունը (այն, թե իր համար որքանով կարևոր է սուբյեկտը համարում ուսման գործընթացը և դրանում ստացված արդյունքը, ինչ իմաստ է տեսնում ուսման մեջ, ինչպես է դրան վերաբերվում),

3) ուսումնական առաջադրանքի տեսակը, որին բախվում է սովորողը (որքան ավելի հետաքրքիր են այդ առաջադրանքները, այնքան դրանց կատարման ժամանակ մոտիվացիան ավելի կայուն կլինի):

## Գլուխ II

Ուսման նկատմամբ դրդապատճառների (մոտիվացիա) խթանումը սովորողների ինֆորմացիայի և նախաձեռնության զարգացման համար

1. ուսումնական նյութի բովանդակությունը ,

ա. ուսուցչի և սովորողների շփման սեղ

3. ուսումնական գործունեության մակարդակն ու բնույթը:

Կրթության բովանդակությունը և ուսումնական տեղեկատվությունն ոչ մի նշանակություն չունեն երեխայի համար եթե դրանք չեն բխում նրա պահանջներից և ինֆորմացիայի չեն դրդում ուսումնական գործունեության: Այսինքն՝ ուսումնական նյութը պետք է մատուցվի այնպես ,որպեսզի առաջացնի դպրոցականների հուզական արձագանքը: Դրա համար անհրաժեշտ են՝

1. Ուսումնական նյութի մատուցման և մեկնաբանման հատուկ մոտեցումներ .
  - Վերլուծական/բացատրական, ֆիննագրատական, տրամաբանական /

- Գործնական
- Արտասովոր

2. Ուսումնական նյութի բովանդակությունն պետք է լինի գրավիչ: Հական կողմերի ու մասերի ընդգծումն և ցուցադրումը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

- Կարևորել առանձին մասերը
- Ընդգծել դժվարություն, բարդությունը ներկայացնող պահերը/ պարզության, մատչելիության ստեղծում /,
- Մղել նյութի հանաչողության ուղղվածության և նորության հայտնաբերման,
- Հայտնիի մեջ բացահայտել նորը
- Հայտնաբերվել պատմականության, ժամանակակից ձեռքբերումներ ներկայացնող հետաքրքիր փաստերը

3. Հարկավոր է ներառել հետաքրքրաշարժ հարցերով վարժություններ:

4. Կազմակերպել գիտելիքների և կարողությունների ցուցադրում, որոնք կարող են ունենալ հասարակական և անձնական բնույթ:

5. Հաստատել միջառարկայական կապեր

Տարբեր ոճեր ձևավորում են տարբեր դրդապատճառներ: «Անհաջողությունից խուսափելու» միտումն արգելափակում է ներքին մոտիվացիայի ձևավորումն: ՈՒսուցչի ժողովրդավարական ոճը, ընդհակառակը, խանգարում է ներքին մոտիվացմանը: Լիբերալ ոճն իջեցնում է ուսման մոտիվացիան և ձևավորում «հաջողության հույսի» դրդապատճառ: Նիստ կարևոր է սովորողների հետ հարաբերությունների որակը: Այդ առումով հարկավոր է նկատառել՝

1. Անձի զարգացումը, թերությունների ցուցադրումը, սովորողների նկատմամբ վստահության դրսևորումը,
2. ՈՒսուցչի անձնական վերաբերմունքի դրսևորումը աշակերտի նկատմամբ, սեփական կարծիքի արտահայտման ձևը,
3. Կուլեկտիվում ընկերական հարաբերությունների կազմակերպումն / փոխստուգում, փոխօգնություն, կարծիքների փոխանակում /:

Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուց պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կիսել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը: Դպրոցը պատասխանատու է երեխայի ներդաշնակ զարգացման համար և հասարակական բարդ հարաբերությունների մեջ նրա հարմարման համար: Դպրոցական դաստիարակությունը մեծապես նպաստում է մարդու ապագա կյանքի մոդելի ձևավորմանը: Երեխայի հոգեկան և աճնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և նրա արհեստավարժությունից: Ներկայիս կրթական կյանքի պահանջները, երբ առաջ են մղվում անձ-անձ փոխհարաբերությունների կարևորությունը և ի հայտ է գալիս կրթության հումանիզացիայի գործընթացը առավել կարևորում են ուսուցչի անձը: Ուսուցչի անձնային առանձնահատկությունները ֆենարկելիս առաջնային են դառնում նախ և առաջ այն որակները, որոնք

նպաստում են մանկավարժական գործունեության լիարժեք տիրապետմանը: Բնականաբար, ուսուցիչ լինելու համար առաջնային են նրա անձնային որակները, գաղափարային, իմացական և արժեքային ուղղվածությունը, նրա մասնագիտական հիմնային գիտելիքները և հմտությունները: Ուսուցչության են արժանանում մասնավորապես մանկավարժական ընդունակութ-յունները, որոնց մեջ կարելի է առանձնացնել ուսումնական նյութը մատչելի դարձնելը, ստեղծագործականությունը աշխատանքում, կազմակերպչական ձևերը, երեխաների հանդեպ ուսուցչությունը, հետաքրքրվածությունը, հստակ, պատկերա-վոր, համոզիչ խոսքը, ուսումնական նյութն իրական կյանքի հետ կապելու հմտությունը, պահանջկոտությունը և այլն: Որքան բազմազան կարող են լինել տարբեր հեղինակների կողմից հետազոտված և առաջարկված ուսուցչի ընդհանուր ընդունակությունները, միանշանակ կարելի է փաստել այն, որ առանցքային է համարվում երեխաների հանդեպ սերը, կապվածությունը նրանց հետ, նրանց հետ աշխատելու ձգտումը (նույնիսկ կենսական պահանջը): Մանկավարժական գործունեության ընթացքում կարևոր դեր է խաղում ուսուցչի սթրեսակայունությունը: Սթրեսի դրսևորումները ուսուցչի աշխատանքում բազմազան են և բազմաբնույթ: Այսպես, առաջին հերթին, ընդգծվում են ուսուցիչների տագնապալիությունը, մոխրացումը: Սթրեսակայունության ձևավորման մեջ առաջնային դեր է խաղում ուսուցչի հանդուրժողականությունը, ինչն առաջին հերթին պայանանավորված է ուսուցչի դրական դիրքորոշումներով և կարծրատիպերի բացակայությամբ, ինչպես նաև ներքին պատասխանատվության զգացումով: Որքան բարձր են պատասխանատվությունը և հանդուրժողականությունը, այնքան ավելի հաջողակ է ուսուցիչը իր գործունեության ընթացքում:

Ուսուցիչը, դրսևորելով նշված անձնային որակներն ու ընդունակությունները, իր գործունեության ընթացքում հանդիպում է մի կարևոր հարցի՝ ինչպիսի՞ պայմաններում երեխայի անձի ձևավորումը կարող է ընթանալ առավել արդյունավետ:

1. Երեխայի անձի ձևավորումը ու դաստիարակությունը ենթադրում են երեխայի հուզական ուլարտի վրա որոշակի ազդեցություն: Այս ազդեցությունը պետք է ներառի երեխայի ողջ անձը, նրա ներքին աշխարհը: Սրան հասնելու համար, ակնհայտ է, որ ուսուցիչը պետք է լավ նանաչի և հասկանա իր աշակերտներին, հասկանա այն «հողը», ուր պետք է գցի իր «սերմը»: Դաստիարակության արվեստը կապող օղակ է այն բանի միջև, թե ինչ է ցանկանում ձևավորել ուսուցիչը և ինչն է սուբյեկտիվորեն կարևոր երեխայի համար: Ուսուցիչը կատանա իր սպասված արձագանքը, եթե կարողանա հասնել երեխայի համար հուզականորեն կարևոր և նշանակալից գործոններին: Այս տեսակետից կարևոր է հենվել երեխայի առկա պահանջմունքների վրա, քանի որ դրանք գարգացման աղբյուրներ են: Որքան շատ պահանջմունքներ են բավարարվում, այնքան արդյունավետ է ազդեցությունը: Օրինակ, հմուտ ուսուցիչները գիտեն, թե որքան կարևոր է աշխատանքում հաշի առնել, հարգել և ընդունել դեռահասների ինքնահաստատման, ինքնուրույնության ձգտումները:

2. Անձի ձևավորման մեկ այլ կարևոր պայման է սովորողների ակտիվությունն ու ինքնուրույնությունը: Եթե աշակերտները ինքնուրույն կարողացան վերլուծել, փաստել, եզրակացություններ անել, ցուցաբերել սեփական վերաբերմունքն ու գնահատականը որևէ հարցին, կարելի է վստահ լինել, որ բարենպաստ հող է ստեղծվել համոզմունքների ձևավորման համար: Հակառակ դեպքում ուսուցիչը կարող է միայն գիտելիքներ արամայրել, որոնք կապված չեն լինի աշակերտի անձի հետ և չեն կարող կրել հուզական երանգ: Հաջողության հասնելու համար ուսուցիչը պատրաստ է ընդունել երեխայի սեփական ինքնուրույն դատողութ-յունները, գնահատականները, հարգել դրանք և միասին վերլուծել:

3. Նշանակալից դեր են խաղում ամրապնդումները, խրախուսանքները, գնահատականները: Երեխայի տեղին խրախուսանքն ու դրական ամրապնդումը ստեղծում են դրական հուզական երանգ, բավարարվածության զգացում են առաջացնում, դրդում կատարելագործման: Մյուս կողմից, ուսուցչի խրատանքը, դժգոհությունները բացասական հույզեր և զգացողություններ են առաջացնում, որոնք ստիպում են երեխային գերծ մնա լիետագայում նման վարձանքից: Սակայն և խրախուսանքը, և պատիժը պետք է կիրառվեն տեղին, ժամանակին և հմտորեն: Երեխային խրախուսելիս և պատժելիս ուսուցիչը կարող է հետևել մի քանի կանոնների՝

- Հրապարակային գովեստն ուժեղացնում է ազդեցությունը, մինչդեռ հրապարակային պարսավանքը նհուում է երեխային: Դժգոհությունները անհրաժեշտ է հայտնել երեխային առանձին:

- Արդյունավետ չէ գլխավ գնահատումը՝ թե դասարանի, թե առանձին աշակերտի: Գլխավ դրական գնահատականի ժամանակ նվազում են ինքնաքննադատությունը, պահանջկոտությունը: Գլխավ բացասական գնահատականի դեպքում խարխլվում է սեփական ուժերի հանդեպ հավատը: Այսինքն, երկու դեպքում էլ գնահատականը պետք է լինի մասնակի, որպեսզի հնարավորություն ընձեռնվի առաջ շարժվելու, կամ սխալները ուղղելու:

- գնահատականը կարող է լինել ուղիղ (կիրառվում է անունների մատնահուսման) և անուղղակի (առանց անունների մատնահուսման), որն առավել արդյունավետ է բացասական գնահատական տալու դեպքում:

- ցանկացած ազդեցության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն երեխայի կայուն բնութագրերը, այլև նրա ժամանակավոր հուզական վիճակը: Բնականաբար, կախված իրավիճակից, երեխան նույն ասվածքը ընկալում է յուրովի:

Պատահում են այնպիսի դեպքեր, երբ ուսուցչի կողմից հստակասված, տեղին և ճիշտ պահանջները երեխայի կողմից դիմադրության են հանդիպում կամ բացասական արձագանք ստանում: Լ.Սլավինան և Լ. Բոժովիչը ենթադրում են, որ այդպիսի իրավիճակներում մեծահասակների պահանջները ստանում են երեխայի համար անընդունելի իմաստ: Գոյություն ունեն մի քանի կարևոր պատճառներ, որոնք այդպիսի իմաստային պատճեհներ են ստեղծում՝

- Այն դեպքերն են, երբ իմաստային տարբերակումը պայմանավորված է պահանջի բովանդակությամբ՝ այսինքն, մեծահասակն ու երեխան տարբեր իմաստներ են դնում մեկ պահանջի մեջ: Երեխան չի կարողանում ընդունել մեծահասակի պահանջները, քանի որ այլ կերպ է հասկանում որոշ փաստեր: Օրինակ, մեծահասակը պահանջում է չկովել, սակայն երեխան շարունակում է դա առնել, քանի որ կովիլը դիտարկում է որպես քաջության և արիության ցուցանիշ: Որպեսզի հաղթահարվի այս իմաստային պատճեհը անհրաժեշտ է հասկանալ երեխայի ընկալումները ավյալ պահանջի վերաբերյալ;

- Այն դեպքերն են, երբ իմաստային տարբերություններ չկան, սակայն պահանջների ներկայացման ձևերը երեխայի կողմից հատուկ կերպ են ընկալվում, օրինակ, ծաղրանքի տեսքով, կամ կրկնվում են շատ հաճախ, ինչի հետևանքով կորցնում են իրենց ուժը, կամ դրանց իրականացման համար երեխան չունի համապատասխան ներուժ;



- սրանք այն պատճեններն են, որոնք առկա են կոնկրետ մարդու հանդեպ: Մի քանի նախորդող ազդեցությունների և հարաբերությունների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է ուսուցչի մի կերպար, որն ունի իր հանդեպ հատուկ վերաբերմունք: Հետևաբար, ուսուցչի ցանկացած խոսք ընկալվում է այդ վերաբերմունքի պրիզմայից էլիելով: Այս պատճենների ձևավորման հիմքում ընկած են ուսուցչի մի քանի նախորդող գործողությունները՝ նա մշտապես բացասաբար է գնահատել երեխային և նրա գործունեությունը; անկասարմ պնդում է իր պահանջները; պահանջների ներկայացման ձևը սխալ է ընտրում:

Պատճենների առաջացման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև երեխայի անհատականությունը, նրա հոգեկան վիճակը, տարիքային առանձնահատկությունները, ինչը պետք է անպայման ի նկատի ունենա ուսուցիչը: Ուսուցչի անձնառանձնահատկությունների բնարկումն ու վերլուծությունը չի կարող լիարժեք լինել առանց մանկավարժական շփման վերլուծության: Շփումն ուսուցչի աշխատանքի հիմքն է: Շփումն ասելով՝ կարելի է հասկանալ սուբյեկտների համագործակցություն, որի մեջ կարելի է առանձնացնել երեք բաղադրամաս՝

1. կոմունիկատիվ /ինֆորմացիայի փոխանակում/;
2. ինտերակտիվ /գործողությունների փոխանակում, փոխհարաբերվելու ստրատեգիայի ընտրություն/;
3. պերցեպտիվ /ուրիշի ընկալում և հասկացում/:

Շփման էությունը կայանում է հասարակական փորձի և մշակույթի ձևերի փոխանցման մեջ: Շփման մեջ մարդը ինֆորմացիան է և ներկայանում՝ բացահայտելով անհատական առանձնահատկությունները: Ուսուցչին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, գիտելիքներ, կարողություններ, որոնք հիմք են կազմում մարդկանց արդյունավետ հաղորդակցման համար: Աշակերտի անձի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ուսուցչի մանկավարժական կառավարման սեր: Մանկավարժական կառավարման սերը ընդհանուր ուսումնական գործունեության և շփման ընթացում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների կայուն միջոցների ընդհանրությունն է: Աշակերտի վարքի կառավարման համար առավել հաճախ ուսուցիչները կիրառում են համոզմունքները, պահանջները, ներշնչանքը:

Ուսուցիչը արդյունավետ է շփվում երեխաների հետ, եթե՝

- բարյացկամ է և քաջալերող;
- թույլ է տալիս աշակերտին ինֆորմություն դրսևորել, հայտնել սեփական կարծիքը, ազատ արտահայտվել;
- ակտիվ է, հետաքրքրված, լիովին ընդգրկված ուսումնական գործընթացի մեջ;
- անկեղծ է, չի վախենում ցույց տալ իր թերությունները;
- դինամիկ է և նկուն շփման մեջ, արագ ըմբռնում է առկա դժվարությունները, մարում կոնֆլիկտները;

- հարգալից է, հասկացող, ընդունող առակերտի անձը, ցուցաբերում է անհատական մոտեցում;
- կարող է դժվարությունը դիտել երեխայի տեսակետից ելնելով, պարաստ է ռեֆլեքսիայի, առակերտի մոտ առաջացնում է վստահություն, որ իրեն հասկացել են;
- ակտիվ է, դասարանը պահում է դրական լարվածության մեջ:

Արդյունավետ մանկավարժական շփման համար կարևոր նշանակություն ունի նաև սոցիալական հեռավորությունը, որը բնութագրվում է ուսուցչի և առակերտի սոցիալական դիրքերի տարբերությամբ, նրանց իրավունքներով և պարտականություններով միմյանց հանդեպ: Մեծ սոցիալական հեռավորության դեպքում կարող է օտարացում առաջանալ, շատ փոքր հեռավորության դեպքում շփումը կարող է կրել ընկերական բնույթ: Այսպիսով, կարելի է նկատել, թե որքան են կարևորվում ուսուցչի անձը և նրա շփման հմտությունները ուսումնական գործընթացում, քանի որ անհրաժեշտ անձնային որակների, մասնագիտական հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման սխեմաների կարելի է խթանել երեխայի անձի զարգացումը, իսկ հակառակ դեպքում սահմանափակել այն:

Դեռահասությունն այն շրջանն է, որը հսկայական ազդեցություն է թողնում մարդու հետագա ողջ կյանքի վրա: Այն, թե ինչպես նա կարձագանքի իր կյանքի իրադարձություններին, ինչպիսի որոշումներ կկայացնի, շփման ինչ շրջապատ կընտրի, ինքն իրեն և իր հարազատներին ինչպես կվերաբերվի, մարդկանց հետ հարաբերություններն ինչպես կկառուցի, արդյո՞ք հաջողակ կլինի, կսովորի՞ արդյո՞ք հասնել իր ուզածին, ինչպիսին կլինեն իր ձգտումներն ու ինչպես կհաղթահարի դժվարությունները. Այս ամենի անձնային ռեսուրսները, հմտությունները և ունակությունները ձևավորվում են հենց դեռահասային տարիքում: Դա ոչ միայն օրգանիզմի, այլև անձի «վերակառուցման» շրջան է: Դեռահասը դրա իրականացման համար հսկայական ռեսուրսներ և էներգիա ունի, ընդորում, սակայն, դեռևս սահմանված չէ դրանց կիրառման վեկտորը, մշակված չեն զարգացման համար դրանցից օգտվելու կարևոր կենսականունակությունները: Դեռահասներն իրենց առջև վիթխարի նպատակներ են դնում, սակայն չգիտեն, թե ինչպես դրանց հասնել: Նրանք ձգտում են վերին գաղափարների, սակայն կատարելությունից իրենց շատ հեռու են զգում: Նրանք ձգտում են անկախության՝ չափից դուրս կախված լինելով շրջապատի կարծիքից: Դեռահասները լի են հեռավորության մտքերով ու զգացմունքներով: Նրանք երբեմն չեն կարող բացատրել սեփական արարքները: Չարմանալի չէ, որ սա մարդու կյանքի ամենադժվար ժամանակաշրջանն է: Ցավոք, ծնողները նույնպես դադարում են հասկանալ իրենց երեխաներին: Փոխգործակցության և ազդեցության նախկին, սովորական մոդելները դադարում են «գործել»: Բախվելով դեռահասի անսովոր վարքագծին, բացահայտ դիմադրությանը կամ օտարացմանը՝ ծնողները շփոթվածությունից աստիճանաբար անցնում են գայրույթի: Չգտելով պահպանել վերահսկման նախկին միջոցները՝ նրանք ուժգնացնում են նրանք: Դեռահասն, ի պատասխան, ավելի ու ավելի մեծ ակտիվությամբ է պայքարում իր անկախության համար: Կոնֆլիկտները հաճախակի են դառնում: Արդյունքում՝ վտանգավոր օտարացում, ըմբռնման բացակայություն, մտերիմ և բարյացակամ հարաբերությունների կորուստ: Նկարագրված գործընթացն այս կամ այն չափով տեղի է ունենում յուրաքանչյուր ընտանիքում, և դա պետք է ընդունել որպես անխուսափելի երևույթ: Սակայն ինչի՞ կվերածվի այդ հակամարտությունը՝ լցված կլինի բռնությամբ ու կործանումներով, թե՞ կվերահի նոր մակարդակի հարաբերությունների համատեղ զարգացման, շատ դեպքերում կախված է ծնողներից և դեռահասին շրջապատող մյուս մեծահասակներից: Դեռահասային տարիքում մարդն առաջին անգամ ձգտում է տարանջատել ծնողների գնահատականը նրանից, թե ինչ է հենց ինքը մտածում որևէ հարցի շուրջ: Նա առաջին հերթին սկսում է ինքնագնահատական ձևավորել: Դրա համար նա պետք է մի փոքր հետ հրի ծնողների սովորական արժեհամակարգը, որպեսզի այն չխանգարի իր ինքնորոշմանը: Ինչպե՞ս է նա անում դա: Նա ամեն ինչ կասկածի է ենթարկում: Այսպիսով, դեռահասը սկսում է նրանից, որ ընդլայնում է

սահմանները և նոր տեղանքները սկսում ուսումնասիրել ավելի համարձակաբեկ, քան մանուկ հասակում: Չաքնտանիքից հոգեբանական առանձնացման սկիզբն է: Նման ձգտումը, չնայած վախեցնող միտումներին, հասունացման նորմալ շրջան է: Առանց այսպիսի բարդ և, ընդհանուր առմամբ, իրոք վտանգավոր ժամանակաշրջանի, հնարավոր չէ որևէ մարդու ձևավորումը: Ծնողները պետք է պատրաստ լինեն դրան և սովորեն առանձնացնել սեփական հանգստության ձգտումը մեծահասակ ընկերոջ իրական օգնությունից, որը դեռահասին թույլ է տալիս ռիսկի դիմել, սակայն միշտ կողմն է ու միշտ կարող է կանգնեցնել (երբ ռիսկի աստիճանը սպառնում է ոչ թե ուղղակի կապուտկների ձեռքբերմամբ, այլ կենսական լուրջ հետևանքներով) և օգնել դուրս գալ բարդ իրավիճակից: Սրանում է կայանում ծնողների իսկական աջակցությունը: Այս շրջանում դեռահասը հետևյալ խնդիրներն է լուծում՝

- Սեփական «ԵՄ»-ի և աշխարհում իր տեղի, այսինքն՝ իր, որպես անհատականության ուսումնասիրությունը. ո՞վ եմ ես, ինչպիսի՞ն եմ ես, որո՞նք են իմ յուրահատկությունները, ինչպիսի՞ աշխարհում եմ ես ապրում, ո՞րն է իմ տեղն այս աշխարհում:
- Սեփական անձի, անձնային որակների հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորումը, այսինքն՝ դրանց՝ որպես արժեքային, իր համար պետական որակների ընդունումը: Օբյեկտիվ գնահատման ունակությունը նրա, թե այդ որակները որ դեպքերում կարող են արդյունավետ լինել և որոնցում կարող են խանգարել իրեն:
- Սեփական որակներից և ստացած փորձից գիտակցաբար օգտվելու կամ դրանցից ոմանց դրսևորումից գիտակցաբար ձեռնպահ մնալու ունակությունների ձևավորումը:
- Մանկական դրվածքների, համոզմունքների, հրահանգումների վերանայում և սեփական արժեհամակարգի ձևավորում: Ընդ որում, մանկական փորձը միշտ գերիշխող նշանակություն ունի, սակայն դեռահասի խնդիրն իր անհատականությանն օտար, իր զարգացմանը խանգարող տարրերի տարանջատումն է՝ ընտանեկան արժեքներից, որոնք աջակցում և օգնում են լուծել կենսական խնդիրները:
- Սեռադերձային ինքնագիտակցության և սեփական սեքսուալության ձևավորում. ինչպիսի՞ տղամարդ /կին եմ ցանկանում դառնալ, որո՞նք են սեռի յուրահատկությունները և ինչպե՞ս եմ ես ինձ զգում այդ սահմանների ներքո, կարո՞ղ եմ արդյոք համապատասխանել այն իդեալներին, որ ունի մարդկանց մեծամասնությունը, ինչո՞վ են իմ իդեալները նմանվում հանընդհանուր ընդունված գաղափարներին կամ տարբերվում դրանցից, ինչպիսի՞ն է սեռական կյանքը, որքանո՞վ եմ ես սեռապես գրավիչ և այլն:
- Սահմանների որոշում. ի՞նչն եմ ես գտնում ճիշտ և սխալ, ի՞նչն է ինձ համար բարիք և չարիք, որո՞նք են ռիսկի սահմանները, որոնց կարող են դիմել կյանքի տարբեր իրավիճակներում, կարո՞ղ եմ արդյոք ենթարկվել որոշակի կանոնների, կարողանո՞ւմ եմ արդյոք ինքս որոշակի կանոններ սահմանել, ինձ և մյուսների համար:
- Սեփական պատկանելության սահմանում. ինչպիսի՞ն է իմ ընտանիքը, ինչպիսի՞ն է իմ ընտանիքի պատմությունը, ո՞րն է իմ տեղն այդ ընտանիքում, ինչպիսի՞ն եմ ես՝ որպես ընտանիքի անդամ, որպես ընկեր, որպես աշակերտ, որպես իմ տարեկիցների հանրության անդամ, դո՞ւր է գալիս ինձ արդյոք այն, թե ինչպես եմ նրանց հետ ինքս ինձ դրսևորում:
- Ֆիզիկական կարգավիճակի սահմանում. ինչպիսի՞ն է իմ արտաքինը, գրավի՞չ եմ ես արդյոք, ի՞նչ է պետք անել գրավիչ լինելու համար, ինչպիսի՞ն կցանկանայի լինել, ի՞նչ կա իմ մեջ, որ գոյություն չունի մյուսներում և հակառակը՝ ի՞նչ չունեմ ես, որո՞նք են իմ հնարավորություններն ու

սահմանափակումները (առողջություն, ֆիզիկական առանձնահատկություններ, բնածին տվյալներ և այլն):

- Սեփական բնավորության սահմանում. ինչպիսի՞ն է իմ բնավորությունը, ինչի՞ վրա եմ հիմնված իմ արձագանքներն ու հաճակը, դո՞ւր է գալիս ինձ արդյո՞ք բնավորությունս, ցանկանո՞ւմ եմ և կարո՞ղ եմ արդյո՞ք որևէ բան փոխել իմ բնավորության մեջ, օգնո՞ւմ եմ ինձ արդյո՞ք բնավորությանս առանձնահատկությունները, թե՛ խանգարում:

- Սեփական հուզականունակության զարգացում. ի՞նչ են նշանակում իմ զգացողություններն ու հույզերը, որո՞նք են այս կամ այն զգացողության կամ հույզի պատճառները:

- Այլոց հետ բարեհաջող հարաբերությունների կառուցմանը նպաստող որակների զարգացում: Հարաբերությունների ստեղծման հմտությունների զարգացում, ինչպես նաև՝ մտերիմ, բաց հարաբերություններ կառուցելու ունակություն:

- Կենսական կարևոր նպատակների սահմանման ունակություն: Ի՞նչ մասնագիտություն եմ ցանկանում ձեռք բերել: Ինչո՞վ է այդ մասնագիտությունն ինձ գրավում և ինչո՞ւ եմ ես հենց դա ընտրել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով դպրոցական կյանքի բովանդակության մեջ առանց խմաստի ու արժեքավորման հիմքի չի կարող գոյություն ունենալ գործունեություն: Հարկավոր է հստակ ձևավորել, զարգացնել և խթանել սովորելու դրդապատճառներ /մոտիվացիա/: Ինչն<sup>օ</sup>վ են պայմանավորված դպրոցականների ուսումնական գործունեության դրդապատճառների խնդրի արդիականությունն ու կարևորությունն: Այսուր կրթությանն ու դաստիարակությանն առնչվող առավելապես սուր խնդիրները կապված են կամ դպրոցականների վարքագծի բացասական մոտիվացիայի, կամ դրդապատճառների բացակայության /վերջինս հանդիպում է մեծ մասի մոտ/, հետևաբար նաև կրթության և դաստիարակության հիմնական ցուցանիշների իջեցման հետ: Դրական դրդապատճառները հոգեբանական, բարոյական և ֆիզիկական առողջության պահպանման և զարգացման ուժեղ գործոններ են:

Ուսումնական մոտիվացիայի ձևավորումն առանց չափազանցության կարելի է համարել ժամանակակից դպրոցի կենտրոնական խնդիրներից մեկը, իսկ կրթության դրդապատճառի կազմավորման մակարդակը մանկավարժական գործունեության արդյունավետության կարևոր ցուցանիշներից է:

Ինքնուրույնության և նախաձեռնության զարգացման համար մոտիվացիայի ձևավորման բոլոր մակարդակներն էլ կարևոր են և անհրաժեշտ: Աշակերտներն իմացական հաճույք են ստանում խնդրի լուծումից: Հետաքրքրաշարժ են ոչ միայն հաղորդվող գիտելիքները այլև դրանք ստանալու եղանակները: Նրանք լուրջ հետաքրքրություն են ցուցաբերում ինքնակրթական գործունեության նկատմամբ: Դրական մոտիվացիան այստեղ /հատկապես 4-րդ մակարդակում / շատ կայուն է: Այն դրված է հենց ուսուցման գործընթացի մեջ:

Երեխայի անձի ձևավորման և դաստիարակության գործընթացում նշանակալից և առաջնային դեր է կատարում ընտանիքը, սակայն դպրոց ընդունվելուն պես այս պատասխանատվությունը հավասարապես սկսում են կրել մանկավարժները, որոնք անց են կացնում երեխայի հետ նրա օրվա մեծ մասը:

Ուսուցիչ՝ Ֆ.Նաչատրյան

Առարկա՝	Մաթեմատիկա	Ամսաթիվ	<b>01.10.2 022թ.</b>	Կիսամյակ	I	Դասարան	V
Թեմա՝	Բնական թվերի գումարում : Գումարման տեղափոխական օրենքը:						
Օգտագործվող նյութեր՝	5-րդ դասարանի մաթեմատիկայի դասագիրք, տետր, գրիչ, գրատախտակ, կավիճ, կաշուն թղթեր:						
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> <li>● խորացնել և ամրապնդել բնական թվերի մասին գիտելիքները</li> <li>● սահմանել գումարելիների տեղափոխական օրենքը</li> <li>● ֆննարկել Օ-ի հատկությունները: Իմանա՝ գումարվող թվերի արդյունքը գումարն է:</li> </ul>						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	<p>Սովորողը կարողանա</p> <ul style="list-style-type: none"> <li>● Ցույց տա գումարելիները՝ դրանց արդյունքը գումարն է:</li> <li>● Գումարի երկու թվեր</li> <li>● Ձևակերպվի գումարման տեղափոխական օրենքը</li> <li>● Թվին գումարի գրո</li> </ul>						
Ուսուցչի գարգացման ընթացիկ նպատակները				Նպատակներին հասնելու ռազմավարությունը			
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում				Նախատեսում եմ էվրիստիկ գրույց ,մտազրուի և պրոբլեմային ուսուցում:			
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ			Կիրառվող մեթոդ (ներ)	

<p>մուտ, ներկա-բացակա (2-7ր.)</p> <p>կռահատման փուլ (20-25ր.)</p> <p>անդրադարձ (7ր.)</p>	<p>Տնային աշխատանքների ստուգում</p> <p>Ծանոթանում են դասի թեմային և նպատակներին,</p> <p>Լուծել վարժուրդուններ 213, 216,</p> <p>Խնդիր 218</p>	<p>Գրատախտակին գրում է դասի թեման, ծանոթացնում է դասի նպատակներին, վարում է էվրիստիկ գրույց բացատրում է նոր թեման:</p> <p>Շրջում է դասարանում, օգնում և ուղղորդում է աշակերտներին, պատասխանում անհասկանալի հարցերին</p> <p>Ամփոփում է դասը աշակերտների օգնությամբ՝ կատարելով հարցադրումներ, տալով էզրահանգումներ</p>	<p>▪ Ի՞նչ է բնական թվերի գումարը:</p> <p>▪ Որո՞նք օ են գումարելիները և գումարը:</p> <p>▪ Գումարելիների տեղափոխական օրենքը:</p> <p>▪ Ի՞նչպես գումարել թվին գրո:</p> <p>▪ Ցույց տալ տասերով գումարելիների տեղափոխությունը:</p>	<p>Մտագրոհ</p> <p>Հարցադրումների մեթոդ</p>
<p>Գնահատում /3ր/</p>	<p>Զևավորող գնահատում, փոխադարձ գնահատում: Խրախուսել և ոգևորել աշակերտներին:</p>			
<p>Տնային աշխատանք (3ր.)</p>	<p>Տնային առաջադրանքի հանձնարարում:</p> <p>Վարժուրդուն 215, 217 (էջ 34)</p>			

Դասի անդրադարձ

Ի՞նչը լավ ստացվեց

Աշակերտները լուծեցին վարժարյունները սովորեցին գումարելիների գումարման տեղափոխական օրենքը:

Ի՞նչը անակնկալի բերեց ինձ

Ինձ համար անակնկալ էր թույլ առաջադիմություն ունեցող աշակերտ X-ի ակտիվ մասնակցությունը դասին:

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց

Աշակերտները ակտիվ համագործակցեցին միմյանց հետ, դասը յուրացվեց դասարանում, չմնացին անհասկանալի հարցեր:

Ի՞նչը կփոխեի

Ավելի շատ ժամանակ կտրամադրեի թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից

Սովորողներն իմացան գումարելիները գումարը, գրոյի և թվի գումարումը: Լուծեցին վարժարյուններ:

Հասա՞ր դրոյով վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա

Հասա իմ առջև վերջնարդյունքներին: Դա երևաց աշակերտների կատարած աշխատանքներից :

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց

Իմ ուշադրության կենտրոնում էր աշակերտների սովորելու մոտիվացիայի զարգացումը: Սովորողները աշխատեցին ինֆնուրույն և իրենց նախաձեռնությամբ կապելիների միջոցով կատարեցին գումարում:

**Դ ա ս ա պ լ ա ն 2**

Ուսուցիչ՝ Ֆ. Խաչատրյան

Առարկա՝	Մաթեմատիկա	Ամսաթիվ	<b>15.10.2 022թ.</b>	Կիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը:						



Օգտագործվող նյութեր՝	7-րդ դասարանի երկրաչափության դասագիրք, ֆանոն, անկյունաչափ, տետր, գրիչ, գրատախտակ, կավիճ, կաշուն քղթեր:			
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> <li>● խորացնել և ամրապնդել երկրաչափական պատկերների մասին սովորողների գիտելիքները</li> <li>● կառուցել եռանկյուն</li> <li>● նշանակել գագաթները տառերով</li> <li>● Կարգավ անկյունները</li> <li>● Քննարկել նման պատկերները և հավասար եռանկյունները</li> <li>● Ցույց տալ հավասար կողմերը և հավասար անկյունները</li> <li>● Ապացուցել եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը</li> <li>● Մաշտաբային ֆանոնի միջոցով չափել եռանկյան կողմերը և հաշվել եռանկյան պարագիծը</li> </ul>			
Ուսուցանման արդյունքներ, որոնք կվիաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	<p>Սովորողը կարողանա</p> <ul style="list-style-type: none"> <li>● Գծել եռանկյուն</li> <li>● Տառերով նշանակել գագաթները</li> <li>● Չափել կողմերի երկարությունը</li> <li>● Հաշվել եռանկյան պարագիծը</li> <li>● Համեմատել եռանկյունների կողմերը, անկյունները</li> <li>● Սահմանել թեորեմը և ապացուցել</li> </ul>			
Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ուղղվածությունը			
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում	Նախատեսում են խմբային աշխատանք՝ նախատեսելով պարզել խմբերի և դրանցում ընգրկված աշակերտների ներգրավվածության չափը			
Գործողություններ(Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)

<p>մուտք, ներկա- բացակա (3ր.)</p> <p>սկիզբը (7-10ր)</p>	<p>Տնային աշխատանքների ստուգում</p> <p>Աշակերտները լսում են մտածում են տրված հարցերի մասին հիշում անցածը</p>	<p>Մտազրոհ է առում բարդությունների վերաբերյալ հարցերի միջոցով հիշեցնում է նախորդ դասերին անցածը լսում է կարծիքներ</p>	<p>•Ի՞նչ է եռանկյունը:</p> <p>•Ինչպե՞ս են գրում գագաթները:</p> <p>•Որո՞նք են եռանկյան անկյունները:</p> <p>•Որո՞նք են նման պատկերները:</p> <p>•Որո՞նք են հակա նկյունները:</p>	<p>Մտազրոհ</p> <p>Հարցադրումների մեթոդ</p>
<p>Կշռադատման փուլ(20-25ր.)</p>	<p>Կարդում են համեմատարարված նյութը/եռանկյուն / աշխատում են գույգերով և ֆննարկում են եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը:</p> <p>Զույգերը ներկայացնում են աշխատանքները, համեմա տում են իրենց սովորածը դասագրքի հետ:</p>	<p>Շրջում է դասարանում, օգնում և ուղղորդում է աշակերտներին, պատասխանում անհասկանալի հարցերին</p> <p>Բաժանում է ֆարտեր որոնց վրա տրված են տարբեր եռանկյուններ և աշակերտները պետք է գտնեն հավասար եռանկյունները, գրեն գագաթները, գրեն անկյունները տառերով և կարդան:</p> <p>Ամփոփում է դասը աշակերտների օգնությամբ՝ կատարելով հարցադրումներ, տալով եզրահանգումներ</p>	<p>Սովորողները թերթիկների վրա գծում են եռանկյուններ, նշում են գագաթները ,անկյունները, գրում են անկյունները, գտնում են հավասար եռանկյունները, համեմատում են անկյունները և վերադրումով գտնում են հավասար եռանկյունները:</p> <p>Այնուհետև աշակերտները տեղում լուծում են գրատախտակին 99 վարժություն իսկ աշակերտներից մեկը գրատախտակին գրում է 99 ա, հաջորդը աշկերտը բ ք այսպես հերթականությամբ միջև լուծվի վերջին վարժությունը:</p> <p>Տեղում լուծած աշակերտները համեմատում են իրենց լուծածները գրատախտակի լուծված վարժության հետ :</p>	
	<p>Թերթիկների վրա գրում են ինչ սովորեցին և ինչը կկարողանան կիրառել խնդիրների լուծման ժամանակ:</p> <p>Աշակերտները ակտիվ մասնակցում են ֆննարկմանը և պատասխանում են հարցերին:</p>	<p>Հարցերի միջոցով ամրապնդում է նոր ուսուցանվող նյութը:</p>		

անդրադարձ (7բ.)				
Գնահատում	Ձևավորող գնահատում, փոխադարձ գնահատում: Խրախուսել թույլ սովորող աշակերտներին:			
Տնային աշխատանք (3բ.)	Տնային առաջադրանքի հանձնարարում: Վարժուրդուն 98,108 (էջ 35)			

## Դասի անդրադարձ

### Ի՞նչը լավ ստացվեց

Սովորողները գծեցին եռանկյուններ, համեմատեցին կողմերը, անկյունները, կատարեցին վերադարձ:

### Ի՞նչը անակնկալի բերեց ինձ

Հասա սահմանված վերջնադրյունքին, աշակերտները կարողացան գծել եռանկյուն, սահմանել թեորեմը :

### Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց

Դասին մասնակցեցին բոլոր աշակերտները: Ամեն ինչ ընթացավ պլանավորածի պես :

### Ի՞նչը կփոխեի

Ժամանակի սղուրջան պատճառով չհասցրեցի լրացուցիչ տեղեկություն տրամադրել

### Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից

Այս դասից աշակերտները ստացան հավելյալ տեղեկություններ, կատարեցին ինֆորմացիոն եզրահանգումներ:

Հասա՞ր դրոշմ վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա

Հասա սահմանված վերջնարդյունքին, աշակերտները կարողացան սահմանել թեորեմը և միասին ապացուցել:

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց

Այս դասին ուշադրության կենտրոնում էր աշակերտների ինֆորմացիոնության և նախաձեռնության զարգացումը:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Ամոնազիլի Շ.Ա. «Խոհեր հումանիտատիկան մանկավարժության մասին»-Մ.1996
2. Վ.Պ. Պետրունեկ ,Լ.Ն. Տարան, Հուզումնալից հասակ, «Լույս», Երևան, 1975:
3. Բուլդիրև, Դասյեկ, «Լույս» Երևան 1974:
4. Шабанова Т.Л., Елисеева Н.И., Иванова И.А. Практикум по педагогической психологии: учебно-методическое пособие / Т.Л. Шабанова, Н.И. Елисеева, И.А. Иванова. – Н.Новгород: НГПУ им. Минина, 2014. – 151 с
5. Гальпирин П.Я., Запорежец А.В., Эльконин Д.Б., Проблема формирования знаний и умений у школьников. «Вопросы психологии, 1963, №5, с.61 - 72.
6. Давыдов В.В., Содержание и структура учебной деятельности школьников. В кн.: Формирование учебной деятельности школьников. М., 1982, с.10-20